

ՇՈՂԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ, Բ.Գ.Թ.

ՀՀ ԳԱՄ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՕՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Բանալի բառեր** - մեմուար, հիշատակարան-օրագրություն, պատմական իրադարձություններ, գործունեություն, ուղեգիծ, օր-յեկտ, սուբյեկտ, աշխարհագրություն, կենսափիլիսոփայություն, ծո-ցատետրեր, ինքնավերլուծություն, ուրվագիծ*

Ավ. Իսահակյանի «Հիշատակարանը», մեմուարային գրա-կանության ինքնատիպ նմուշ լինելով, առավելապես մերժե-նում է օրագրային ժանրին: Օրագիրը անհատի կյանքի դեպ-քերի, ապրումների ու խոհերի ամենօրյա, պարբերաբար ար-վող գրառումներն է: Այդ գրառումները կատարվում են ան-միջականորեն առաջին տպավորության տակ: Ժամանակա-յին հեռավորության բացակայության պատճառով գրանցում խոր վերլուծություն, կարևորի և երկրորդականի բաժանում, տարբերակում չկա: Բովանդակության անմիջականությամբ օրագիրը մոտենում է նամակին: Բնորոշ է մտերիմ տոնը, զգացմունքների անկեղծ պոռթկումը, սրտաբացությունը: Օ-րագիրը անհատը գրում է ոչ թե ուրիշների հետ հաղորդակց-վելու, այլ միայն իր համար: Հետևաբար՝ ինքն իր առաջ լի-ովին անկեղծ է, ինքնատիպ ու շատ հաճախ հակասական:

Օրագրերում սյուժետային առանցք առհասարակ չկա: Կառուցվածքի որոշ ամբողջականություն նկատելի է լինում միայն ամիս-ամսաթիվ ունեցող հատվածներում: Օրագրողը նկարագրում է որևէ բան, գրառում իր տպավորությունները, խորհում է, վերլուծում դեպքերն ու դեմքերը, քննում ինքն ի-րեն և ամփոփում: Հաջորդ հատվածում գալիս են արդեն նոր հարցեր, նոր տպավորություններ, նոր մարդիկ: Յուրաքան-չուր գրառում կարող է իր նախորդների և հաջորդների հետ գրեթե կապ չունենալ: Միայն օրագրի ավարտից հետո է եր-ևում անկախ թվացող այդ գրառումների ներքին կապակց-վածությունը:

Ավ. Իսահակյանի «Հիշատակարանը», զգալի ընդհանրություններ ունենալով հանդերձ, նկատելիորեն տարբերվում է օրագրային ժանրից և առհասարակ մեմուարային գրականության այլ տեսակներից: Հենց հիշատակարանային գրառումներում էլ Իսահակյանը պարզաբանում է օրագիր գրելու նպատակն ու գրության իր սկզբունքները¹:

Ահա, օրինակ, 1893 թ. մայիսի 24-ի գրառումը. «... օրագրություն գրել, նշանակում է գրել այն, ինչ որ մտածում է, ցանկանում է, զգում է անհատը, յուրաքանչյուր երևույթ, որ պատահում է սուբյեկտի ներսում՝ ուղեղում, պիտի գրվի օրատետրում, յուրաքանչյուր երևույթ, դեպք, որ պատահում է դրսում՝ արտաքին աշխարհում, որ կապ ունի սուբյեկտի հետ, պիտի գրվի դարձյալ օրատետրում...» (Էջ 33): «Հիշատակարանի» գրության ողջ ընթացքում այս սկզբունքը հետևողականորեն պահպանվում է:

«Հիշատակարանում» տեղ են գտել ժամանակի պատմական իրադարձությունների, բանաստեղծի կյանքի, գործունեության արձագանքները: Բայց այս ամենը օրագրողը շատ ուրույն ձևով է վերապրում, արտաքին աշխարհի յուրաքանչյուր երևույթ, յուրաքանչյուր դեպք գտվում է՝ անցնելով նրա ես-ի միջով, և միայն այդ կերպ արտացոլվում օրագրային գրառումներում: Խոսքը բոլոր օրագրերին հատուկ հեղինակային սուբյեկտիվիզմի մասին չէ, երբ դեպքի, երևույթի նկարագրությունը ստանում է օրագրողի անհատականությունից բխող սուբյեկտիվ գունավորում: Իսահակյանի «Հիշատակարանում» առավելապես գրառվում են ոչ թե այս կամ այն դեպքը, իրադարձությունը, այլ դրանց ազդեցությամբ հեղինակի ներաշխարհում ձևավորված զգացմունքներն ու խոհերը: Այս առումով, ինչպես նկատում է Իսահակյանը, «Հիշատակարանը» ունի հոգեբանական արժեք, ցույց է տալիս, «թե ինչպես է մարդ զգում, մտածում, թե ինչպես է ազդում օբյեկտը՝ սուբյեկտի վրա» (Էջ 34): Երևում է անհատը՝ իր բնավորությամբ, զգացմունքների աշխարհով, մտածողությամբ, կրոնով, փիլիսոփայությամբ, այսինքն՝ «ամբողջ անհատը իր ամբողջ տարրերով» (Էջ 34): Իսկ որպեսզի անհատը երևա այնպիսին, ինչպիսին կա, օրագրողը «առաջնակարգ պայման պիտի ընդունե ճշմարտությունը» (Էջ 34): Օրագիր գրողը չպիտի ընտրի, գրի միայն լավը, այլ պիտի ներկայացնի իր

¹Ավ. Իսահակյան, Հիշատակարան, Երևան, 1977, էջ 33: Այսուհետև այս հրատարակությունից կատարվող մեջբերումների էջերը կնշվեն շարադրանքում:

թե՛ լավ, թե՛ վատ կողմերը: «Անհատը չպիտի աշխատե իրեն լավ ցույց տալ, պատկերացնել ազնիվ գույներով՝ ծածկելով վատ, գարշ մտքերն ու զգացմունքները» (Էջ 34): Օրագրողի մարդկային անհատականությունը՝ իր մտքերով, ձիրքերով, զգացմունքներով, պետք է ամբողջանա օրագրում, հետևաբար «գրել օրագրություն, նշանակում է գրել անհատականություն» (Էջ 34):

Իսահակյանը, իրապես, «Հիշատակարանում» միանգամայն անկեղծ է, ազատ, անկաշկանդ: Ընդ որում, նա իր ուշադրությունը կենտրոնացրել է ոչ այնքան օրըստօրե կատարված դեպքերի, կարևոր հանդիպումների, իր գրական կենցաղի, որքան իր հոգևոր աշխարհի վրա: «Դրա շնորհիվ Իսահակյանի «Հիշատակարանը» դառնում է մի յուրօրինակ քնարական-փիլիսոփայական օրագիր-խոստովանություն» (Էջ 3), - 1977 թ. հրատարակված գրքի *խմբագրի կողմից* հատվածում գրում է Էդ. Ջրբաշյանը:

Կառուցվածքի հիմնական առանձնահատկություններով «Հիշատակարանը» մերձենում է օրագրային ժանրի երկերին, իրենից ներկայացնում է ամիս-ամսաթիվ ունեցող հատվածների հաջորդականություն:

Ունի ժամանակային մեծ ընդգրկում՝ անցյալ դարի 90-ական թվականներից մինչև 1956 թ.: Սյուժետային հստակ գիծ չունենալով՝ հանդերձ՝ այն ներկայացնում է Իսահակյան փիլիսոփայի, բանաստեղծի, մարդու հոգևոր զարգացման բարդ ու հակասական ուղեգիծը:

Ավ. Իսահակյանը հիշատակարան-օրագրություն սկսել է գրել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներից: Առաջին գրառումները վերաբերում են 1891թ. դեկտեմբերին: Օրագրային գրառումներն առհասարակ, օրագրողի խոստովանությամբ, դժվարությամբ են կատարվել: Դրանք հաճախ ընդհատվել են բավական երկար ժամանակով: 1893 թ. մարտին Իսահակյանը գրում է. «Ահա քանիտրոդ անգամս է սա, որ ես ձեռնարկում եմ հիշատակարան գրել, բայց գանազան հակասող մտքեր, հանգամանքներ, կամքի թուլություն, բնավորության թուլություն, տոկի ու եռանդի բացակայություն, հարատևության սնանկություն, ահա սրանք ուժեղ <արգելառիթներ> են հանդիսացել իմ ձեռնարկմանը...» (Էջ 33): Պատանի բանաստեղծին մի ուրիշ խնդիր էլ է մտահոգել՝ ի՞նչ գրել, ինչպե՞ս գրել: Եթե իր ձեռնարկածը օրագ-

րությունն է, ապա այնտեղ պիտի գրի առնվի օրվա կատարվածը՝ ներկան: Բայց չէ՞ որ վերջինս կապվում է անցյալին, շղթայի մի օղակ է: Իսկ անցյալը վերարտադրելը կլինի ոչ թե օրագրություն, այլ հուշագրություն: Ներկայի հասկացությունն էլ հարաբերական է: «...ես չեմ կարող հասնել թարմ, կենդանի ներկային՝ հոգուս ներկային: Գրիչս ոտավոր է, ժամանակի հոսելը-սահելը՝ ձիավոր» (Էջ 34):

Վերջապես նա որոշում է գրել այնպես, ինչպես կստացվի, խառը, ամեն ինչի մասին: Տատանումները տեղի են տալիս, և հիշատակարան գրելը Իսահակյանի համար դառնում է սիրելի ու հետևողական զբաղմունք: Որոշ ընդհատումներով, գրառումները շարունակվել են մինչև 1956 թ.:

Հետաքրքիր է նաև «Հիշատակարանի» աշխարհագրությունը: Սկսվելով Էջմիածնում այն դարձել է հեղինակի սիրելի ուղեկիցը ամբողջ կյանքում, նրա հետ եղել է Թիֆլիսում, Օդեսայում, Բաքվում, Դարսում, Ղազարապատում, Անիում, Պոլսում, Լայպցիգում, Վիեննայում, Վենետիկում, Փարիզում և նրա հետ էլ վերջնականապես հաստատվել է Երևանում:

Բավական լայն է նաև «Հիշատակարանի» թեմատիկ ընդգրկումը: Արդեն նշել ենք, որ այստեղ գրի են առնված Իսահակյանի խոհերը անձնական կյանքի, համամարդկային և ազգային բազմազան հիմնախնդիրների մասին: Այնուամենայնիվ, այդ ընդարձակ դաշտում կարելի է առանձնացնել մի քանիսը:

Նախ «Հիշատակարանի» էջերում իր ինքնատիպ մտածողությամբ ներկայանում է Իսահակյան փիլիսոփան: Ո՞րն է կյանքի նպատակը, մարդու դերը տիեզերական բարդ համակառույցում: Այս հարցերը դիտարկելով փիլիսոփայական և կրոնական այլազան ուսմունքների լույսի տակ՝ աստիճանաբար ձևավորվում է հայ բանաստեղծի սեփական կենսափիլիսոփայությունը:

Աշխարհը, տիեզերքը ճանաչելու ձգտումը մղում է ճանաչելու նաև մարդկային հասարակության կառուցվածքը, սոցիալական հարաբերությունները, իր խոսքերով՝ «կյանքի սիստեմները», ուր շատ չարիքներ է տեսնում բանաստեղծը:

«Հիշատակարանի» գրառումներից երևում է, որ Իսահակյանի համար հսկայական նշանակություն է ունեցել հայրենիքի թեման: Հայաստանի քաղաքական ճակատագրին, իր ժողովրդի ապրած մեծ ողբերգությանը նա անդրադարձել է

առավելապես օրագրերում, ծոցատետրային գրառումներում, նամակներում՝ թեմային վերաբերող գրեթե ոչ մի գեղարվեստական գործ չտպագրելով այդ տարիներին:

«Հիշատակարանը» ամբողջությամբ ներկայացնում է նաև Իսահակյան մարդուն, նրա կենսագրության որոշ նուրբ մանրամասներ, մասնավորապես՝ առաջին սիրո պատմությունը: Մեծ նշանակություն է տվել Իսահակյանն իր հոգևոր աշխարհի քննությանը, ինքնավերլուծությանը՝ ո՞վ է ինքը, որտե՞ղ են իր արմատները, ո՞րն է իր գոյության նպատակը: Իսահակյանի հայտնի ստեղծագործություններից շատերի նախնական հղացումներին, դրանց կենսական-հոգեբանական ակունքներին, բովանդակության ուրվագծերին առաջին անգամ հանդիպում ենք «Հիշատակարանի» էջերում: Դրանք անգնահատելի ուղեցույցներ են բանաստեղծի ստեղծագործությունը ուսումնասիրելու համար:

SHOGHIK KHACHATRYAN- GENRE SPECIFICATIONS OF ISAHAKYAN'S DIARY NOTIS- Av. Isahakyan's 'Memoir', approaching the works of the diary genre with the main features of the structure, presenting a sequence of sections with a month-date, differs noticeably from the diaries, especially with its original subjectivism.

The 'Memoir' contains the echoes of the historical events of the time, the life and activities of the poet; however, the focus is not so much on the events of the day, the important meetings, the literary life of the poet, but on his spiritual world.

Having no clear plot line, it represents the complex and contradictory direction of Isahakyan philosopher, poet, and spiritual development of human being.

Key words: Memoir, memoir-diary, historical events, activity, route, object, subject, geography, bio-philosophy, notebooks, self-analysis, outline

ШОГИК ХАЧАТРЯН- ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ ДНЕВНИКОВЫХ ЗАПИСЕЙ АВ. ИСААКЯНА- Основными структурными особенностями приближаясь к жанру дневниковых записей и представляя собой последовательность датированных отрывков, «Дневники» Ав. Исаакяна значительно отличаются от простого дневника, в первую очередь из-за уникального субъективизма. В «Дневниках» нашли свое отражение исторические события того времени, жизнь поэта, его деятельность, но внимание сосредото-

